Պայմանագիր N01

Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «15» հունվարի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ «Աշխատակազմ») ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա և «Սպասարկում» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հմայակ Մկրտչյանի, որը գործում է «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշումով հաստատված կարգը, «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 04 Պետական աջակցություն «Սպասարկում» ՊՈԱԿ-ին ծրագրով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 04 Պետական աջակցություն «Սպասարկում» ՊՈԱԿ-ին ծրագրով, որի շրջանակներում «Սպասարկում» ՊՈԱԿ-ը 2015թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմին ամրացված շենքերի և այլ գույքի սպասարկում:

2. Կողմերի պարտականություններ և իրավունքներ

2.1. «Սպասարկում»-ՊՈԱԿ-ը պարտավոր է.

2.1.1. Իրականացնել ՀՀ կառավարության աշխատակազմին ամրացված շենքերի ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքները:

2.1.2. Ապահովել վերը նշված շենքերում տեղակայված պետական կառավարման մարմինների աշխատակազմերի շենքային պայմանների հետ կապված ընթացիկ աշխատանքները

ա) կատարել կապի միջոցների,ջեռուցման,ջրամատակարարման, էլեկտրամատակարարման,կոյուղու,կաթսայատների,էլեկտրատեխնիկական սարքավորումների և ապարատների, վերելակային տնտեսությունների ինժեներա տեխնիկական սպասարկում

բ) իրականացնել կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ և պատրաստի սննդի մատակարարման աշխատանքներ

գ) մատուցվող ծառայությունների մեկ միավորի գինը 72146.6մ^2 ընդհանուր մակերեսով շենքերի սպասարկման 1 մ^2-ու համար կազմում է ամսական 435.69 դրամ, ընդամենը ամսական 31433.75 հազ. դրամ:

2.1.3. Սույն պայմանագրի 4.1 ենթակետում նշված ժամկետում «Աշխատակազմ» ներկայացնել կատարված բյուջետային ծախսերի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ:

2.2. «Սպասարկում» ՊՈԱԿ-ը իրավունք ունի

2.2.1.Սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ժամկետում և կարգով «Աշխատակազմ»-ից ստանալու ՀՀ պետ.բյուջեից հատկացվող գումարը:

2.3. «Աշխատակազմ» - ը պարտավոր է

2.3.1.Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել «Սպասարկում» ՊՈԱԿ-ին:

2.4. «Աշխատակազմ» - ը իրավունք ունի

2.4.1. Պահանջել «Սպասարկում» ՊՈԱԿ-ից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 4.1 կետում նշված ժամկետում:

2.4.2. ցանկացած ժամանակ լուծել կամ փոփոխել Պայմանագիրը այդ մասին 15 օր առաջ գրավոր ծանուցելով «Սպասարկում» ՊՈԱԿ-ին եթե պարզվի, որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևե պայման:

3. Վճարումների կարգը

3.1 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 377205.1 հազար դրամ (երեք հարյուր յոթանասուն յոթ միլիոն երկու հարյուր հինգ հազար հարյուր) ՀՀ դրամ:

3.2 «Աշխատակազմը» 3.1 կետում նշված գումարը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին օրենքի համաձայն փոխանցում է «Սպասարկում» ՊՈԱԿ-ի հաշվին համամասնորեն՝ամսական կտրվածքով, ոչ ուշ, քան տվյալ ամսվա 10-ը բացառությամբ հունվար ամսվա համար, որը կփոխանցվի մինչև 2014թվականի հունվարի 25-ը::

4. Հաշվետվություն ներկայացնելու կարգը և ժամկետները

4.1 «Սպասարկում» ՊՈԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ «Աշխատակազմին» է ներկայացնում հաշվետվություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թվականի փետրվարի 4-ի N80-ն հրամանով հաստատված Հ-2 և Հ-4 օրինակելի ձևերին, և «Հաշվետվության ծրագրերի իրականացման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման մասին» (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 28.03.2007թ. N324-ն հրամանի ԱՀ-1 օրինակելի ձևին) համապատասխան, ոչ ուշ քան եռամսյակին հաջորդող ամսվա 12-ը:

4.2 «Սպասարկում» ՊՈԱԿ-ը աշխատակազմին յուրաքանչյուր տարվա համար տարվա ավարտից հետո մինչև հաջորդ տարվա փետրվարի 1-ը ներկայացնում է հաշվետվություն:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

6.2 Ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

«Աշխատակազմ»	«Սպասարկում»
«ՀՀ կառավարության աշխատակազմ » պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 1 ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն Հ/Հ 9000 11022135 ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար – նախարար Դ. Հարությունյան	Պետական ոչ առևտրային կազմակերպություն ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 1, 4-րդ մասնաշենք «Հայէկոնոմբանկ» 16300 – 8170181 ՀՎՀՀ 02568463 Տնօրեն Հ. Մկրտչյան